ԱԿԱՆՋԱՊԻՏԱԿԻ ԱՄՐԱՑՄԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

WITH FUNDING FROM
AUSTRIAN
DEVELOPMENT
COOPERATION

CARD
CENTER FOR
AGRIBUSINESS &
RURAL DEVELOPMENT

Ինչպե՞ս ճիշտ ընտրել ականջի այն հատվածը, որտեղ պետք է կատարել համարակալում

Նկ.1. ԽԵԿ-ի ականջախեցու աճառային գալարն ունի երեք ճյուղավորում՝ 1. ականջախեցու ստորին կողմնային զոլք, 2. ականջախեցու միջնային (մեդիալ) զոլք, որը հանդես է գալիս որպես ականջախեցու աճառային գալարի առանցք, 3. ականջախեցու վերին կողմնային զոլք:

Նկարում կանաչ հորիզոնական գծերով պատկերված են ականջախեցու աճառային զոլավորումները: Ականջապիտակը ամրացվում է ականջախեցու ստորին կողմնային և միջնային զոլքերի մեջտեղում (1, 2):

Նկ. 2. Ականջախեցու ներքին մակերեսը գծանշում ենք երկու ուղղահայաց գծերով՝ բաժանելով այն 3 հավասար հատվածների, ապա ընտրում մեջտեղի հատվածը:

Նկ. 3. Կարմիրով նշմարված է այն հատվածը, որտեղ պետք է կատարել ականջապիտակի դակում: Ականջապիտակը այս հատվածում կլինի լավ տեսանելի, չի վնասի արյունատար անոթները և նյարդերը:

ԱԿԱՆՋԱՊԻՏԱԿԻ ՆԱԽԱՊԱՐՏԱՍՏՈՒՄ

Քայլ 1. 70%-անոց բժշկական սպիրտով ախտահանել դակիչը և ականջապիտակը:

Քայլ 2. Ականջապիտակի առջևի հատվածը ամրացնել դակիչի ասեղին: Սեղմել այն, որպեսզի համոզվեք, որ ականջապիտակը ամրացված է ասեղին: Այն հատվածը, որտեղ ամրացրել էիք ականջապիտակի առջևի հատվածը, ախտահանել 70%-անոց բժշկական սպիրտով, վրան քսել վազելին կամ հականեխիչ քսուք, օրինակ՝ լևոմիկոլ):

Քայլ 3. Բորբոքումներից խուսափելու համար ախտահանել ականջի ներսի և դրսի մակերեսները և մշակել 70%-անոց բժշկական սպիրտով: Ընտրել մեջտեղի հատվածը և կատարել դակում:

Քայլ 4. Պտտել ականջապիտակը՝ համոզվելու համար, որ այն ամուր ամրացված է:



Քայլ 5. Ստուգել ականջապիտակի հետին հատվածի ամրությունը։

Քայլ 6. Կրկնել գործողությունները մյուս ականջի վրա՝ նախօրոք ախտահանելով դակիչը և ականջապիտակները։

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը